ԳՐԱԽՕՍԱԿԱՆ·

ԷՋՄԻԱԾՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ·

(Շարունակութիւն [1])

Առաջի գլխում ինչպէս մենք տեսանք Պ· Սորիգիգովսկին խօսում է միայն Ս· Էջմիածնի տաճարի շինութեան և նրա պատերում պահուած երկու յունալեզու հին յիշատակարանների մասին կանգ առնելով նաև ՃԵմարանի պարտիզի գաւթում եղող խոյաձև սիւների վրայ։ Բայց նրա նպատակն է նկարագրել Ս· Էջմիածնի Աւետարանը։ Ս· Էջմիածնի հարուստ և այժմ լաւ կարգաւորեալ, համարներով որոշած և մեծ խնամքով ու զգուշութեամբ պահպանուած մատենադարանում ոչ թէ մի այլ մի քանի հարիւր ընտիր ձեռագիր Աւետարաններ կան, բայց թէ հնութեամբ և թէ ընտիր, հաղուագիւտ կազմով աչքի ընկնող և հռչակաւորը մէկն է՝ «վղոսկրեայ կազմով Աւետարանը»։ Մինչդեռ միւս բոլոր ձեռագրերը կարգին շարուած են ապակեայ դռներով գզրոցների և պահարանների մէջ, նրա համար շինած է առանձին փոքրիկ արկղ, կողպէքով կողպած և դրած մատենադարանի միջում մի տեղանի վրայ, որպէսզի ցոյց տրուի յատկապէս մատենադարանը այցելող հիւրերին։ Երբ պարզապէս առում է «Էջմիածնի Աւետարան» ահա այս Աւետարանն է հասկացւում և սրան է յարգելի հեղինակը առաջին անգամ խիստ մանրակրկրութեամբ նկարագրել, մեկնել նրա կազմի և միջում եղած մանրանկարները և արտանկարել։

Քանի որ ինչքան ինձ յայտնի է այդ սրբութեան կատարեալ

---

1 Տես «Արարատ» թիւ Ա։

նկարագրութիւնը հայերէն լեզուով առաջին անգամ է լոյս տեսնում և եթէ ուրիշ անգամ էլ գրել են նրա մասին, գուցէ քչերն են առիթ ունեցել կարդալու, ուստի թող ներուի մեզ, եթէ գրքասիրութեան սահմանից դուրս գալով, կերկարացնենք մեր խօսքը։ Յանկալի էր որ իւրաքանչիւր հայ ի մօտուց ծանօթանար իւր ամենաթանկագին հին յիշատակարաններից մէկի հետ կրկնակի անգամներ կարդալով Սորիզիգովսկու գիրքը։

Հեղինակը հայկական մանրանկարներ ուսումնասիրելու նպատակաւ 1889 թուին Ս. Էջմիածին գալով անսպասած հանդիպում է փղոսկրեայ կողով Աւետարանին և «մինչդեռ մատենադարանապետն (ներսէս եպիսկոպոսն էր) անընդհատ կոտիպէր՝ ես այս մեծագին ձեռագիրը լուսանկարեցի»։ Սակայն ձեռագիրը նախապէս յայտնի է եղել գիտնական աշխարհին նկարագրուած լինելով 1882 թ. կոմս Ուվարովից Տփխիսում գումարուած հինգերորդ հնախօսական ժողովի տեղեկութեանց մէջ[1]։

Ձեռագրի մեծութիւնն է 0, 28×0, 31 մետր։ վերջում ունի ընդարձակ յիշատակարան։ Ըստ որում Աւետարանը գրած է Ս. Ստեփաննոս նախավկայի անունով կառուցած նոր վանքի Ստեփաննոս կրօնաւորի համար Հայոց ՆՀԸ (փրկ. 989) թուին. գրիչն է Յովհաննէս ոմն։ Նորավանքը՝ հիմնել է ըստ Ստեփ. Սիւնեցու (Մոսկ. 1861. էջ. 17.) Ստեփաննոս անունով մէկը Հայոց 936 թ. և հաւանական է, որ յիշատակարանում այդ վանքը լինի ակնարկուած, նա գտնուում էր Վայոց ձորում։ Ձեռագրի երբ և ինչ եղանակաւ Էջմիածին բերուելը յայտնի չէ։

Աւետարանը բացի դրսի զարդից ներսումն էլ ունի գեղեցիկ նկարներ, որոնք առանձին ծաղկողի գործ են, սակայն գրիչը ինքն էլ փորձել է իր նկարչական շնորհքը ցոյց տալ։ Սրա նկարները կամ մի քանի խաչեր են, համակենդրոն շրջանների մէջ, կամ ա-

---

[1] Пятый археологическій съѣздъ въ Тифлисѣ. Москва. 1882. էջ. 352. որը թարգմանուեց գաղղիերէն J. J. Maourier, La bibliothèque d' Etschmiadzine et les Manuscrits armèniens. Տփխիս. 1885. Տես նաև «Արձագանք» 1886. թ. 25. 26. 29.

ուանձին Աւետարանից առած տեսարաններ. 1) Կանայք գերեզմանի վրայ և 2) Մոգերի երկրպագութիւնը, որից երևում է Յովհաննէսը թէև լաւ է գրել, բայց նկարելու կարողութիւնից զուրկ է եղել։ Այդ աննշան նկարներից զատ ձեռագրում կան 19 ընտիր նկարներ, 15ը գրքի սկզբում, 4ը վերջում։ Այս նկարների նկարագրութիւնը դեռ չտուած՝ հեղինակը անցնում է փղոսկրեայ կողերին։

Նոցա մեծութիւնն է 0,305×0,365 մետր, իսկ բառացի նկարագրութիւնը հետևեալն է։

«Ցառաջակողմը (Տախտ. Ա. 1.) կը տեսնենք մէջ տեղը երիտասարդ անմօրուս անձմը դէպ ի յառաջ բազմած։ Կրկին հանդերձ զգեցած . . . Ասոր վրայէն նետուած է վերարկու մը, որոյ քղանցքը լայն զարդարանք մը և վերջաւորք ունի։ Ոտքերն, որ պադուանդանի վրայ են, սանդալ անցուած է։ Մազերն ճակատին վրայ բոլորակաձև գիսակ կը կազմեն, աջն օրհնութիւն տալու լատինական ձևով կրծոց առջև բարձրացած է։ Ձախն գիրք մը կը յեցուցանէ ձախ ծնկին վրայ։ Որովհետև գլխոյ բոլորակը կը պակսի, մեկնութիւն միայն նմանութիւններէ կարելի է գտնել։ Ըստ այսմ պատկերին մէջ մեր առջևն կեղոցն է Քրիստոս Ամենակալ։ Քրիստոսի ետևն՝ աջ ու ձախ կողմը մօրուաւոր երկու հոգի կայ, որոնք իրենց աջն տափաձև կը բռնեն կրծաց վրայ։ Գլխոց նկարագրէն կը ճանչուին Պետրոս և Պաւղոս այսինքն՝ Պետրոս ձախակողմն, աւելի բոլորակ մօրուքք և Պաւղոս աջակողմն աւելի սուր մօրուքք և երկայնաձև կերպարանքք։ Այս կենդրոնական խումբը քառակուսի կը պատէ դափնեայ պսակ մը, որուն եզերաց մէջտեղերի օղակաձև նշանով յայտնուած գոհարեղէնով զարդարուած է։ Անոր չորս կողմն ալ կան ուրիշ բարձրաքանդակներ, որոնք կողմնական հորիզոնական շերտերով իրարմէ անջատուած են. այս շերտերու վերին եզերքը ձուաձև և անկիւնական զարդերու շարք մը ունի, իսկ վարինը՝ ատամնաձև։

Վերին երկայնանկիւն տաշտին մէջ կը տեսնենք ճանկաձև խաչ մը շուրջ պատեալ յաղթութեան պսակաւ, զոր երկու կողմանէ մէկ մէկ թըռչուն հրեշտակներ կը բռնան, որոնք իրենց մարմնովն, ծածանող հանդերձիւն ու թևքն այն միջոցն այնպէս գրաւած են, որ միայն վերին անկիւնները տեղ մնացած է երկու կիսապատկերներու, որոնք երկուքն ալ՝ իրենց աջը տափաձև բռնած են կրծոց վրայ։ Ձախ կողմը կեցող անձը մօրուք չունի. և ճառագայթաձև թագ մը կը կրէ։ Աջակողմեան պատկերին գլուխը դժբաղդաբար կոտրած ինկած է։

Կենդրոնական խմբին ձախակողմը կը տեսնենք երկու բարձրաքանդակ իրարու վրայ։ Վերն ձախակողմն կը ներկայացուի Քրիստոս անմօրուս կենդրոնական պատկերին պէս զգեցեալ կրկին հանդերձ, վերարկու և սանդալ։ Դէպ ի ձախ քալելով ետ կը նայի, ձախ ձեռքը, խաչ մը բռնած, և աջն օրհնութիւն տալով դէպ յաջ կարկառած, կը նայի երկայն հանդերձ զգեցեալ անձի մը, որուն որովայնն ուռած է և վերին իրանն ետ հակած։ Այս անձն աջը տափաձև կը կարկառէ առ Քրիստոս, մինչդեռ ձախն որովայնին վրայ հանգչեցուցած է։ Յետսակողման յատակին վրայ կերևան երկու մօրուաւոր կերպարանք, որմէ մէկն անշուշտ առաքեալ մըն է Քրիստոսի ընկերացող, և միւսն՝ կերպարանաց նկարագրին նայելով՝ Հիւանդին ընկերը կրնայ համարուիլ։ Կը ներկայացուի ջրդողն»։

Այս խմբին տակ կերևայ դարձեալ Քրիստոս, խաչ ի ձեռին, որ ձախ ծունկն ամբարձած, կը դիմէ յաջ, և աջն օրհնութիւն տալով կը կարկառէ մերկ և անմօրուս մարդու մը, որ ոտքերն իրարու անցուցած կը հանգչի լճի մը մէջ, որուն ափունքն ու ալիքն ձևացուած են։ Այս մարդն աջն տափաձև կամբառնայ և ձախը վար կախած կը շոշափէ ձկան մը բերանը։ Վերը կերևայ երեք մօրուաւոր անձանց գլուխը։

Կենդրոնական խմբին աջակողման վերին պատկերին մէջ Քրիստոս կը կենայ՝ դիմացի պատկերին պէս ընկերակցութեամբ առաքելոյ մը։ Այս խմբին հիւանդն է անդամալոյծը, որ իւր մահճին ոտերէն բռնած՝ գլխոյն վրայ բարձրացուցած՝ կընթանայ։

Վարի խմբին մէջ կերևայ Քրիստոս վերինին պէս, բայց դէպ ի յաջ կերթայ։ Առջևը կեցած է մէկն, որ մրայն մէջքը ծածկած է. ասոր մազերն ծառացած են և ինքը ձեռքերն յառաջ կարկառելով դէպ յառաջ կը կքի։ Ասոր ետևն իբրև ի յառաջակողման պատկերի կայ ուրիշ մերկ անձ մըն ալ, որուն մազերն ալ ծառացած են, և կը նայի Քրիստոսի և իւր ընկերին։ Կը ներկայացուի երկու դիւահարաց բժշկութիւնը։

Ստորին երկայնանկիւն դաշտին մէջ մէջտեղ Քրիստոս խաչը ձախն առած՝ իշու վրայ հեծեալ կը ներկայացուի, իրեն կը ներկայանան չորս անմօրուս անձինք, որոնք հանդերձ և վերարկու հագած են, ասոնցմէ յառաջակողմանը՝ աջն դէպ ի Քրիստոս կարկառած է ցուցընելով, յաջորդ երկուքն արմաւենւոյ ոստ բռնած են, իսկ վերջինը կըջանայ հեռու ձախակողմն կեցող արմաւենւոյ մը ոստն կորզել։ Քրիստոս աջը կամբառնայ օրհնելով դէպ ի երկու անձինքն, որոնք ընդ առաջ կուգան։ Մէկն առջևէն՝ երկայն հանդերձով, փսիաթ մը կըտարածէ ճամփուն վրայ, և միւսն ասոր ետևը՝ լայն զգեստիմը մէջ պատատուած և գլուխը թագ. ձախ թևն ալ ոսկեղջիւր մը պնդած՝ վերարկուաւ պատեալ աջը դէպ ի Քրիստոս կերկարէ. Յետսակողման յատակի վրայ ուրիշ երկու հոգի՝ դէպ

ի այս երկուքը կուգան։ Այս անձանց գլուխներուն մէջտեղերը կամարներ քանդակուած են։ Կը ներկայացուի Մուտն յԵրուսաղէմ։

Ինչպէս որ կողին յառաջակողմն այսպէս զՔրիստոս և իւր գործքերը կը ներկայացնէ։ Նոյնպէս ասոր հակառակ ընդդիմակողմը (Տախտ Ա. 2.) բոլորովին սուրբ Աստուածածնի սեփհականուած է։ Կենդրոնական դաշտին մէջ կը տեսնենք զինքը։ կրկին հանդերձ զգեցած և գլուխը կտաւով ծածկած։ որուն տակէն գծաւոր խոյր մը կերևայ. բազմած է գահի մը վրայ և ագուցեալ ոտքերը պատուանդանի վրայ դրած է։ Կը նայի ինչպէս նաև յառաջակողմն ներկայացուած Քրիստոս։ ուղիղ՝ նայողին։ և երկու ձեռօք հաստատուն բռնած է զՄանուկն Յիսուս։ որ կրկին հանդերձ զգեցեալ և վերարկուաւ ծածկեալ ս. Աստուածածնի ձախ ծնկաց վրայ նստած կը նայի մօրը։ և աչն օրհնելով կամբառնայ և ձախովն գալարեալ բան կը բռնէ։ Գահին երկու կողմը հրեշտակք կը կենան։ ինչպէս կիմացուի անոնց գլխուն վրայի ապարօշէն։ իրենց ձախ ձեռքը բռնած գաւազանէն և պատկերին յատակին վրայ բարձրաքանդակ գործուած թեւերէն։ Երկուքն ալ աչերնին բաց՝ կրծոց վրայ կը բռնեն։ Այս կենդրոնական խմբին և կողմնական մասանց շրջանակին զարդն։ նոյնն է յառաջակողման երեսին հետ։ Նոյնպէս վերին երկայնանկեան պատկերը ճիշտ նոյնն է։ Միայն ասոր վերին աջ անկեան անձինքն ամբողջ մնացած են։ Կը տեսնենք որ՝ այս անձինք փոխանակ Ճառագայթաձև թագի։ զոր միւս անկեան անձինքն ունին։ մահիկ մը կըկրեն գլուխը։ Ուրեմն արեգական և լուսնոյ անձնաւորութիւնքն են ասոնք։

Կենդրոնական խմբին ձախակողմը կը տեսնենք զՄարիամ։ որ կենդրոնական պատկերին պէս զգեցած։ դէպ ի յաջ հիւսկէն թիկնաթոռի մը կոթնած է։

Ձախը որ ծալեալ առարկայ մը բռնած է։ առաջակողման յենարանին կը յեցընէ։ իսկ աչն զարմացած վեր կամբառնայ։ Առջևը կըկենայ ծնկերը իրարու անցուցած հրեշտակ մը՝ ինչպէս կերևայ անթև։ բայց ապրօշով և գաւազանով։ որ աչն դէպ ի Ս. կոյս կամբառնայ։ Կը ներկայացուի Աւետումն։ Ասոր տակի դաշտին վրայ՝ յառաջակողման պատկերի յաջակողմն կերևայ կին մը կանգուն կեցած։ Աչը բարձրացուցած՝ կը բռնէ դաշտ մը և գլուխը դարձուցած է մօրուաւոր անձի մը։ որ իւր դիմացն ձախակողմը կըկենայ և աչը խօսելու ձևով մը կնոջ կարկառած է։ Երկուքին մէջ կը տեսնուի երրորդ անձի մը մօրուաւոր գլուխը։ Պատկերին յատակին վրայ վերին կողմը կամար կը տեսնուի։ զոր կամբառնան օձաձև մատնէքեալ սիւներ։ Կը ներկայացուի Մարեմայ փորձուիլն անիծման ջրով։

Աջակողմն վերին դաշտին վրայ կը ներկայացուի Քրիստոսի ծնունդը։ Յառաջակողման պատկերի մէջ Մարիամ ծնկերն իրարու վրայ՝ կը հանգչի ծածկոցի մը վրայ։ ձեռքերը կրծոց և որովայնի վրայ դրած։ Յոգնած վի-

ճտկի մէջ երեսը կը դարձնէ մարէն, որ աջակողմը կը կենայ Մանուկ պատեալ։ Մարոյ վրայ կը տեսնուի աստղ մը, ձախակողմն եզ, աջակողմն էշ։ Ասոր տակը կը տեսնենք զՄարիամ, որ իշու մը վրայ դէպ ի յաջ կերթայ և Յովսէփ, որ անասնոյն քովէն կերթայ և կը վարէ կօգնէ իրեն։ Մարիամ աջը Յովսէփայ ուսը դրած է և ձախովը վարշամակը կը բռնէ։ Այս խմբին ի յետսակողման պատկերի կ'ընկերանան երկու հրեշտակ, որոնցմէ ձախ-կողմեանը գաւազան մը բռնած է և աջը բաց՝ վեր ամբարձած է, իսկ երկրորդին միայն գլուխը կերևայ։ Կը ներկայացուի ուղև որութիւնն ի Բեթղեհէմ։

Վերջապէս վարի երկայնանկեանը դաշտին վրայ մոգուց երկրպագութիւնը կը ներկայացուի։ Մարիամ Աւետման պատկերին պէս թիկնաթոռի մը վրայ դէպ ի յաջ բազմած է Յիսուս մանուկը գիրկն առած։ Յիսուս աջը կը կարկառէ դէպ ի մոգերն, որոնք աջ կողմէն յառաջ կուգան։ Սոքա հագած են սրածայր կարուած հողաթափ, մուշտակէ սոնոց, կարճ և գօտեորեալ հանդերձ և փոխուգական գոտակ։ Ձեռքերը կը կարկառեն առ Յիսուս՝ ծածկած լաթով մը, որուն վրայ կեցած է բոլորակ և գծաշատ նուէրը։ Իրենց և Յիսուսի մէջ հրեշտակ մը միջնորդ կ'ըլլայ, ուրիշ մը իրենց ետևէն դէպ ի յառաջ կրթռչի և աջովը դէպ ի վեր կը ցուցնէ։ Միւս կողմը՝ Մարեմայ թիկնաթոռին ետևը նստած է Յովսէփ շէնքի մը առջև՝ որ վարագուրով մը կրնայ ծածկուիլ։ Երկրպագութեան տեսարանը կը գիտէ և խօսելու ձևով աջը կամբառնայ։ Պատկերին յատակին վրայ անձանց գլուխներուն մէջ տեղերը կամարներ կերևան»։

Բառացի առաջ բերած նկարագրութիւնից երևումէ թէ հնմուտ քանդակագործը մի փոքր տարածութիւնում՝ այն էլ փղոսկրի պէս կարծր նիւթի վրայ ինչքան մեծ ջանքով, տոկունութեամբ կարողացել է մեզ ներկայացնել այնքան տեսարաններ առնելով Ս. Աւետարանից և անվաւերական գրքերից։ Այդ տեսակ փղոսկրեայ հին կազմեր յայտնի են ութն հատ. երկուսը Հռոմում, մէկը Լոնդոնում, մէկը Պարիզում, մէկը Ռավեննայում և երկուսը Ս. Էջմիածնում։ Նոքա իրար նման են թէ պատկերների դասաւորութեամբ և թէ մեծութեամբ. նոյն իսկ տեսարանների մէջ էլ նմանութիւն կայ և Էջմիածնինը աւելի սերտ նմանութիւն ունի Պարիզի և Ռավեննայի օրինակների հետ, բայց Էջմիածնինը իբրև գործ աւելի նուրբ է։ Յիշեալ վեց օրինակները քննող գիտնականները նոցա ծագման ժամանակի մասին տարբեր կարծիքներ ունին յայտնած. 5-9րդ դարը իբրև սահման

ընդունելով, բայց Սորիզիգովսկին մեր Աւետարանի կազմի ժամանակը աւելի ճիշտ է որոշում։

Միայն Եւրոպացուն յատուկ բազմակողմանի տեղեկութիւններով զինուած, խորը, հիմնովին ծանօթիր առաջադրած հարցին, հեղինակը մի առ մի բացատրում է ընդհանուր նկարագրութեան մէջ համառօտապէս յիշած իւրաքանչիւր տեսարան, ցոյց է տալիս թէ այդ տեսարանները ինչ հին հեթանոսական օրինակների հետևողութեամբ են շինուել, իրենց նմանը որ քանդակների կամ նկարների մէջ ունեն, երբ են շինուել և որտեղ։

Գեղարուեստների պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ նրա մէջ այլ և այլ ձևեր, դրութիւններ միայն աստիճանաբար էին գտնուում և գտնուելուց յետոյ, որոշ ժամանակում իբրև օրինակ ծառայում։ Օրինակ երբ ցոյները սկսեցին մարդու արձան ստեղծել, նոքա սկզբում նրան ուղիղ անշարժ կանգնած էին ներկայացնում, յետոյ քայլող դրութեամբ, վերջը կռթնած և այլն, կամ երբ պէտք է երկու կամ մի քանի անձանց խումբ ներկայացնէին, սկզբում բաւականանում էին երկուսի արձանները առանց մի որ և է կապի իրար կողք կողք դնել, յետոյ խմբի համար վերցնում էին մի մեծի և մի փոքրի արձանները և փոքրը երեխային տալիս էին մեծի գիրկը, մինչև վերջը կատարեալ գեղարուեստը համախմբում էր ներկայացնելի անձանց մի որ և է տեսարանում ցանկացած դիրքերով։ Գեղարուեստի մէջ կատարուող այդ հաստատ, քայլ առ քայլ ընթացող յաջորդականութիւնն է որ մեզ այսօր միջոց է տալիս նրա յիշատակարանների մնացորդների անպայտ ժամանակը, շատ անգամ մեծ հաւանականութեամբ որոշել, իմանալ։ Այդ ճանապարհով է դարձեալ կարողացել գրքիս հեղինակը սահմանել մեր Աւետարանի կազմի ժամանակը։

Քրիստի մօտ երրորդ դարից սկսած Հռոմայեցւոց մէջ սովորութիւն կար՝ որ կոնսուլները կայսեր ընծաներ էին ներկայացնում մեր կազմի պէս հնգամասնեայ փղոսկրից շինած քանդակներ՝ մէջտեղը կայսեր պատկերը բազմած գահի վրայ։ Այդ սովորութիւնը անցնում է յետոյ քրիստոնեաներին, որոնք ճշտութեամբ

պահպանում են պատկերի դասաւորութեան եղանակը, միայն ներկայացնելի անձնաւորութիւններն են փոխում մէջ տեղում փոխանակ բազմած կայսեր, դնում են բազմած Քրիստին, իսկ շուրջն նրա կեանքից դէպքեր։

Այս նմանութիւնը գտնելուց յետոյ՝ հեշտ է եզրափակել թէ երբ կարող է շինած լինել մեր Աւետարանի կազմը։ Չորրորդ դարուց մինչև վեցերորդ դարերը իբրև ծագման սահման դնելով հեղինակը եզրափակում է «Էջմիածնի Աւետարանին կոլերը Զ դարուն առաջին կիսուն ի Ռավեննայ գործուած են»։ (էջ 14)։ Կայսրների համար որոշած ընծաները շինւում էին գլխաւորապէս Ռավեննայում; այնտեղ չորրորդ հինգերորդ դարում կար արհեստաւորների մի խումբ, որի գործերի մնացորդ յիշատակարանները մեծ նմանութիւն ունին Էջմիածնի Աւետարանի կազմի հետ, հետևապէս սա էլ է այնտեղ շինուել և յետոյ կամ իբրև վաճառելի իր Հայաստան բերուել, կամ թէ Աւետարանի տէրը յատկապէս բերել է տուել իր գրքի համար։

Գրքի մնացած մասը նուիրուած է Աւետարանի սկզբում և վերջում եղող մանրանկարների նկարագրութեան և բացագրութեան։ Ամենից առաջ գտնւում են ութ երեսի վրայ մանր երկաթագրով գրած կանոնները, որոնք ամփոփած են զարդարուն և կամարներով միացած սիւների մէջ։ դրանց յաջորդում են մի քանի թերթեր, որոնց վրայ նկարած են։ 1։ չորս սիւների վրայ կամարաձև, մեր յօրգանանի նման նկարած մի տանիք, գլխին խաչ։ 2։ Քրիստոսը բազմած գահի վրայ առանց միրուքի, նրա երկու կողքին երկու ծեր մարդիկ (Պետրոս և Պօղոս) 3։ երկու երկու անձանց պատկերներ երկու թերթի վրայ 4։ Մարիամ Աստուածածինը նստած՝ Յիսուս մանուկը գրկում և 5։ Աբրահամ Իսահակին զոհելիս։ Ակներև է՝ այս նկարները ձերագիրը գրող անձը չէ նկարել, որը իր չափաւոր կարողութեան աստիճանը ցոյց է տուել լուսանցքերի մի քանի անշան նկարներով։ Գիտնական աշխարհին յայտնի էր մինչև այժմ մի ասորական 586 թուին գրած և մանրանկարներով զարդարած Աւետարան — codex Laurentiana կոչուածը։ Հեղինակը հայերէն Աւետա-

բանի մանրանկարները համեմատելով այդ ասորական Աւետարանի մանրանկարների հետ, գտել է զարմանալի նմանութիւն։ Սակայն այդ համեմատութիւնից երևում է, որ մեր Աւետարանի նկարները իրանց ձևերի պարզութեամբ ներկայացուցիչ են աւելի հին քրիստոնէական նկարչութեան և ժամանակով յիշեալ ասորական Աւետարանի նկարներից առաջ են, ուստի պատկանում են, եզրակացնում է հեղինակը, նոյն ժամանակին, երբ կազմն էլ շինուած, այն է վեցերորդ դարու առաջին կէսին։ Իսկ ծագումով հայկական չեն, այլ նկարողները կամ ասորիներ են եղել, կամ արտանկարել են ասորական օրինակներից։

Յարգելի հեղինակի այս կարծիքը հիմնուած է բաւական զօրեղ փաստերի վրայ, որոնք մենք աւելորդ համարեցինք այստեղ մի առ մի թուել և նրան մենք կը ընդունէինք, եթէ նա մի հարց չուծած լինէր։ Կանոնները գրած են Մեսրոպեան գրերով, որոնց ձևը կարծես մի տեսակ միջակ դիրք ունի հին և միջին Մեսրոպեան գրերի մէջ և անկասկած ամբողջ Աւետարանը գրող գրչինը չէ։ Աւետարանի գրութիւնը աւելի հին է ըստ ժամանակի քան կանոնների գիրը, որը կարող է մօտաւորապէս 11-րդ դարում գրուած լինել։ Արդեօք միթէ կարող էր այդ գրուածքը ուրիշ ժամանակում գրուել, քան երբ մանրանկարը նկարուեց։ Այդ ընդունելը դժուար է՝ քանի որ նկարներն են երկրորդականը և գրուածքը գլխաւորը և առաջինը ծառայում է լոկ իբրև զարդարանք երկրորդին, իսկ միւս կողմից կարող ե՞նք մենք արդեօք գիրն էլ վեցերորդ դարու համարել, բայց դրան էլ հակառակ են ուշ ժամանակուայ ձևը։ Այս կէտը ինչպէս ասացինք յարգելի հեղինակը չէ պարզել, ուստի դժուարանում ենք համաձայնել նրա առաջարկած ժամանակի հետ և հարցնում ենք. միթէ չէր կարող յեռոյ ապրող մի ծաղկող նկարի մի հին օրինակ ընդօրինակել։ Որ սովհետև ընդունել, ինչպէս նա է անում, որ կանոնների համար նկարած թղթերը ամբողջ դարեր դատարկ են մնացել և ապա 10, 11 երորդ դարում գրուել, հասարակ դատողութեան հակառակ կը լինէր։

Աւետարանի վերջում կան չորս մանրանկարներ, բայց սոքա ա-

ռաջիններին հետ ոչ մի նմանութիւն չունին։ Դոցա նկարները ներկայացնում են՝

1. Աւետումն Զաքարիայի.
2. Աւետումն Աստուածածնի.
3. Մոգերի երկրպագութիւնը և
4. Քրիստոսի մկրտութիւնը։

Թէ այս նկարները սկզբանէ Աւետարանին չէին պատկանում, այլ յետոյ են աւելացրուել, դրա փայլուն ապացոյցն է, որ նոքա նկարուած են ուրիշ մագաղաթի վրայ և ապա մէկը կարել է իսկական մագաղաթի կտրած տեղի վրայ։ Նոյն հիմունքները, որ տրամադրեցին հեղինակին որոշել գրքի սկզբի նկարների տեղը և ժամանակը, համոզում են նրան այս նկարների մասին էլ նոյն կարծիքը յայտնել։ Ձեռագրի գրիչը յիշատակարանի մէջ վկայում է, թէ նա այդ Աւետարանը ընդօրինակել է մի հին ընտիր օրինակից. պ. Սորիզիգովսկին ընդունում է, որ մեր Աւետարանի թէ կազմը և թէ մանրանկարները ահա այդ հին օրինակին էին պատկանում և նրանից են առնուել. բայց այն ժամանակ պէտք է ընդունել՝ որ այդ օրինակը քայքայուած՝ անպէտք դարձած էր, հետևապէս նաև ոչ յարմար ընդօրինակութեան ձեռնարկ։

Գրքի վերջում մի համառօտ հատուած էլ նուիրուած է հայկական մանրանկարչութեան։ Այս հատուածի մէջ նա աշխատում է ցոյց տալ, որ Հայերը հնում անընդունակ են եղել ինքնուրոյն կերպով փոքր ի շատէ ճաշակ արտայայտող նկարչական կամ արձանագործական մի որ և է բան արտադրել, որ նոքա այդպիսի բաների կարիք ըզգացած ժամանակը դիմում էին արտասահման և մինչև եօթնեբորդ դարը գլխաւորապէս Ասորիք և այստեղից ամեն հարկաւոր բան բերել տալիս։ Իր այդ կարծիքը նա հիմնում է նրա վրայ, թէ Հայոց ամենահին ձեռագիր Աւետարանը՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանի 887 թուի օրինակը զուրկ է բոլորովին մի որ և զարդարանքից և ապա Վրթանէս Քերթողին վերագրած պատկերամարտից դէմ գրած ճառում վերջիններս ասում են իրանց հակառակորդներին. «Ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք, քանզի

ի Հայս պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ; բայց ի Հռոմմոց բերէին, և մեր ուսմունք անտի էին . . . »[1]: Միւս փաստերը երկրորդական են, մենք սրա դէմ այս կասենք. արդեօք շուտ չէ այս տեսակ վճռական կարծիք յայտնելու ժամանակը, քանի որ ոչ մեր մանրանկարներն են ըստ պատշաճի ուսումնասիրուած, ոչ մեր ուրիշ հին գեղարուեստական յիշատակարանները:

Եօթներորդ դարուց սկսած պակասում է Արաբների իշխանութեանը ենթարկուած ասորական ազդեցութիւնը՝ տեղի տալով աւելի զօրեղ չափով յունականին և մասամբ նաև արաբականին: Բայց Հայերը իններորդ, տասներորդ դարուց ի վեր շատ անգամ իրաւ է լոկ արտաքարողներ են, այն էլ երբեմն վատ արտանկարողներ, սակայն սակաւ առ սակաւ զարթնում է նոցա մէջ և այս գեղարուեստի ճաշակ, հետամուտ են լինում ստեղծել ազգային ոճ և մինչև անգամ որոշ չափով հասնում են այդ նպատակին, որը իր ամենակատարեալ աստիճանին հասնում է տասներեքերորդ դարում: Ուրեմն հեղինակը կարծում է. Հայերս մինչև Քրիստոսի իններորդ դարը գեղարուեստական ոչինչ չենք արտադրել, այդ ժամանակուանից ի վեր սկսում ենք իբրև հետևողներ օտարից ընդօրինակել և քիչ քիչ ամբողջ հինգ դար վարժուելով ստեղծել նաև ազգային հայկական ոճ:

Այս գլխով վերջանում է Ստրիզիգովսկու գրքի հայերէն թարգմանութիւնը, բայց նրա գերմաներէնի մէջ կան երկու յաւելուածներ ևս, որոնք հայերիս համար հետաքրքրական չլինելով, չեն թարգմանուել: Նոցա մէջ հեղինակը խօսում է Կոստանդնուպոլսի օսմանեան թանգարանում պահուող երկու ոսկեայ անօթների վրայ եղող նկարների մասին և Կիեւի հոգևոր ճեմարանի թանգարանում պահուող Սինաիից բերած երկու սրբերի նկարների մասին:

---

1. Ծան. թարգ. Վրթանէս Քերթողը կաթուղիկոսութեան տեղապահ էր ամբողջ եօթը տարի 581—588 թ. և նրա օրով ու եկեղեցու անիշխանութեան ժամանակ տեղի ունեցաւ Վրաց եկեղեցու բաժանումը Հայոց եկեղեցուց, Հետևապէս նա ապրել է վեցերորդի վերջում և եօթներորդ դարու սկզբում: